ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1557 07.07.2015թվ.

ՀՀ ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Սույն թվականի հունիսի 27-ին Դիտորդական խումբը այցելություն էր կատարել ՀՀ ոստիկանության Արամվիրի ՄՎ Վաղարշապատի ՁՊՎ և արձանագրել էր մի շարք թերություններ և խախտումներ:

<< ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ
ՄՏՄ № 3245
09 07 2015 թ.

Թերություններ՝

1. ՁՊՎ-ի խցերում տեղադրված պահարանները օգտագործման ենթակա չեն և երբ պահարանի դուռը բացեք՝ կտեսնեք, որ կրում են ձևական բնույթ:
2. Բուժենյակում առկա սրբիչը գտնվում էր կեղտոտ վիճակում և ընդհանուր բուժենյակից տհաճ հոտ էր գալիս:
3. Վարչակազմի խոսքով, ժամկետանց դեղորայքի ոչնչացման մեխանիզմը հետևյալն է՝ <<վարչությունից գալիս են, իրենք տանում են վարչություն>>: Դիտորդական խմբի համար անհասկանալի է, բուժվարչությունից շրջում են բոլոր ՁՊՎ-ներով և հավաքում են ժամկետանց դեղորա՞յքը:

4567
09 07 2015թ.

Խախտում՝

Դիտորդական խումբը ևս մեկ անգամ փաստում է, որ գրանցամատյանները լրացվում են թերություններով և խախտումներով, և Ձեր այն պնդումը որ գրանցամտայններում լրացվում է արգելանքի վերցնելու պահը տվյալ դեպքում՝ այդպես չէ:

ՀՀ ք.Երևան 0009,Սարմենի 60 Հեռ./ֆաքս: (+374 10) 52 81 87
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

Օրինակ՝ Բենիկ Կարենի Հակոբյանը 24.02.2015թ-ին ժամը 12.30-ին ինքնակամ ներկայացել է ՀՀ ոստիկանության Արմավիրի ՄՎ Վաղարշապատի բաժին, ձերբակալվել է ժամը 12.40-ին, իսկ ՁՊՎ է ընդունվել ժամը 12.50-ին: Համապատասխան գրանցամատյանի <<ձերբակալման ամսաթվի և ժամանակի>> աղյուսակում նշված է, որ Բ. Հակոբյանը 24.02.2015թ. ժամը 12.50-ին է արգելանքի վերցվել: Փաստացի, դա ՁՊՎ ընդունելու ժամն է, որի արդյունքում էլ խախտվել է Բ. Հակոբյանի արգելանքի տակ պահելու առավելագույն 72 ժամը, ով ազատ է արձակվել 27.02.2015թ-ին ժամը 12.45-ին:

Ներկայացված բոլոր փաստերի վերաբերյալ անհրաժեշտության դեպքում Դիտորդական խումբը կտրամադրի փաստը հաստատող լուսանկարները:

Այսպիսով խնդրում ենք ուսումնասիրել ներկայացրած փաստերը և տալ մեկնաբանություն:

Հարգանքով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0009,Սարմենի 60 Հեռ./ֆաքս: (+374 10) 52 81 87
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

0025 ք. Երևան, Նալբանդյան 130, Հեռ.՝ (010) 59-66-36, Ֆաքս՝ (010) 59-63-11

№ 212-1-9508 «31» 07 2015թ.

Ձեր 06.07.2015թ. թիվ 2621/1557 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ Հասմիկ Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից ս/թ հունիսի 27-ին ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչության Վաղարշապատի բաժնի ձերբակալվածներին պահելու վայր կատարած այցելության ընթացքում արձանագրված թերություններն ու խախտումներն ուսումնասիրվել են ՀՀ ոստիկանության շտաբում, իսկ Արմավիրի մարզային վարչությունում կատարվել է ծառայողական քննություն:

ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչության կողմից կատարված ծառայողական քննության արդյունքում տրամադրված տեղեկատվության համաձայն տրվում են հետևյալ մեկնաբանությունները:

Թերություններ..

1. Ոստիկանության Վաղարշապատի բաժնի ՁՊՎ-ի խցերի պահարանները ձևական բնույթ չէն կրում, այլ դիտորդների խմբի այցելության պահին ՁՊՎ-ում պահվող անձինք չեն եղել, ուստի պահարաններն եղել են դատարկ վիճակում:
2. Հաշվետվության 2-րդ կետում նշված թերությունները վերացվել են:
3. Ժամկետանց դեղորայքի ոչնչացման համար տեղերում կազմավորվում են հանձնախմբեր, որոնց ներկայությամբ կազմվում է ՁՊՎ-ներում առկա ժամկետանց դեղորայքի քանակի, անվանումների մասին ցուցակ և տեղափոխվում է ՀՀ ոստիկանության ԲՎ պոլիկլինիկայի դեղատուն՝ ոչնչացման նպատակով:

Խախտումներ.

1. Ձերբակալված Բ.Հակոբյանը 24.02.2015թ. ժամը 12.30-ին ինքնակամ ներկայացել է ՀՀ ՔԿ Վաղարշապատի քննչական բաժին և քննիչի կողմից ձերբակալվել է ոչ թե ժամը 12.40-ին, այլ ժամը 12.45-ին, որից հետո ժամը 12.50-ին ընդունվել ՁՊՎ: <<ՁՊՎ-ում պահվող անձանց

խափանման միջոց գրավ կիրառելու միջնորդությունը: Նույն օրը ժամը 12.00-ին համապատասխան որոշմամբ Բ.Հակոբյանը վերադարձվել է ՁՊՎ և վերջինիս հարազատների կողմից գրավը վճարելուց հետո, ժամը 12.45-ին ազատ արձակվել:

<<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանի թիվ 7-րդ սյունակում սխալ գրառում կատարելու համար ոստիկանության Վաղարշապատի բաժնի հերթապահ մասի պետը խիստ նախազգուշացվել է:

ՀՀ ոստիկանության շտաբ